ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

1901 թ.

Ա. ԳՐՔԻ

ՑԱԽԵԼՈՒԱԾ

Ա.

ԿԱՆՈՆՔ Ս. ԺՈՂՈՎՈՅ

ԳՈՐԾ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍ. ԴԱՒԹԵԱՆԻ

32—48 եր. (շարունակելի)

Բ.

ԿՈՅՐ ԵՐԱԺԻՇՏԸ

ՎԼ. ԿԱՐԱԼԷՆԿՕԻ

ԹԱՐԳՄ. ՄՈՒՐԷ ՎԱՐԴԱՊԵՏԻ

113—206 եր. (վերջ)

լա ումժդ Սովորեցին ոմանք զկիւրակէ օրն՝ մինչև ցճաշն
պատուել, և անտի յառաջ լուծանել զաւուրն խոր-
հուրդ։ Ցաղագս նորին հրամայեցաք՝ մինչ ց'երեկոյն
նովին պատուով պատուել զօրն, արգելուլ զինքեանս
ի գործոց և ի ճանապարհորդութենէ, և յերեկոյին
ծունր ոչ կրկնել։

կարն. ժող. Վասն մեծի յայտնութեանն՝ զոր կարգեցին
առաքեալք ի Հոգւոյն սրբոյ՝ ի յունուարի Զ.
ա ումհ կատարել մեծաւ առաւելութեամբ ի փառս Աս-
տուծոյ։ Արդ՝ եթէ ոք ի պատրիարքաց կամ ի
մայրաքաղաքաց եպիսկոպոսաց, կամ յերիցանց,
կամ ի սարկաւագաց՝ այլազգ խորհիցի, և արտաքոյ
առաքելական կանոնաց, զոր ոմանք ի դեկտեմբերի
ԻԴ, զծնունդն առնեն, մոլորեալք յաղանդն Արտե-
մոնի։ Արդ՝ եթէ ոք ըստ այսմ մտաց խորհիցի և
մոլորիցի յուղիղ կարգաց, ի կրօնից Աստուծոյ.
այնպիսին անկցի ի կարգէն, և յաստիճանէն մեր-
ժեսցի, եթէ պատրիարգ իցէ և եթէ եպիսկոպոս.—
զի մի՛ արմատ դառնութեան ի վեր երևեալ և նո-
վաւ բազումք պղծիցին։ Զոր և ոմն ի մերոց եղ-
բարց յասիացւոց աշխարհին տօնեաց ընդ առորիս,
հետևող եղեալ Արտեմոնի, տարադրեցաւ յեկեղեց-
ւոյ և արտաքս անկաւ իբրև զուռն ըստ Տեառն
բանին։ Արդ՝ եթէ եպիսկոպոս, կամ երեց կամ սար-
կաւագ, կամ ընաւ իսկ ի քահանայական կարգէ՝
հետևող լիցի այնմ աղանդի, այնպիսին նզովեալ ե-
ղիցի յԱստուծոյ և ի սուրբ ժողովոյս։

բ ումհա Վասն սուրբ ջօծման ձիթոյն, զոր կարգեցին
առաքեալք յաւուր յայտնութեանն՝ սաղմոսիւք և
օրհնութեամբ և երգօք հոգևորօք և մոմեղինօք ջա-
հիւք բորբոքելովք, ընդ արևագալն ի ջուրն երթան,
և ի նմին աւուր օրինակաւ յորդանանու, զոր Տէրն
կատարեաց՝ ի փրկութիւն ամենայն հաւատացելոց՝
մկրտութեամբ իւրով, և ջախեաց զգլուխ վիշապին
ի վերայ ջուրցն, և ետ օրինակ ամենեցուն՝ նոյն
մկրտութեամբ ծնանիլ ի ջրոյ և ի հոգւոյ և ջախել
զգլուխ վիշապին ի ջուրն, և կոխան լինել գարշա-
պարի մերում՝ առաք հրաման ի Տեառնէ։ Արդ՝ ե-
թէ եպիսկոպոս, կամ քահանայ, կամ սարկաւագ,
ծուլասցի և ոչ երթիցէ ի ջուրն, օրինակաւ յորդա-
նանու՝ ցնծալից բերկրանօք, և ոչ օրհնեսցէ զջուրն,
և ոչ արկցէ յօծման յիւղոյն ի ջուր, և կամ չքաւո-
րութեամբ, կամ ծուլութեամբ, այնպիսին դատա-
պարտեսցի յԱստուծոյ, և արտաքոյ մերոյս եկե-

ղեցւոյ ելցէ, և թէ՝ ժողովրդական է, որոշեսցի։

գ ամիթ Եւ պարտէ աւետարան կարդալ ի Մատթէոսէ, սկիզբն առեալ յառաջմէն. «Գիրք ծննդեան յիսուսի քրիստոսի» և միապէս զամենայն խորհուրդսն կատարել զծննդեան և զմկրտութեան, մինչև յայն տեղի, թէ «հրեշտակք մատեան և պաշտէին զնա», և ապա զնչան խաչին ի ջուրն իջուցանեն, և ամենայն բազմութիւն ժողովրդեանն առցէ յօրհնութեան ջրոյն՝ ըստ իւրաքանչիւր կարդի, ի բժշկութիւն մարդկանց և անասնոց, ողջամիտ հաւատով և ուղիղ մտօք, և նկատել և տեսանել ի ջուրն՝ զայն՝ որ էջն ի յորդանան մարմնաւոր տեսլեամբ և աղաւնակերպ երևմամբ, և ի վերուստ վկայելոյ՝ «դա է որդի իմ սիրելի»։

դ ամիդ Եթէ եպիսկոպոս, կամ երեց, կամ սարկաւագ կամ ընաւ իսկ ի քահանայական կարգէ փոխեսցէ զգիրս ընթերցուածոցն, զաւետարանացն զճրագալուցին, զոր սրբոյն Յակոբայ Տեառնեղբօր եդեալ է, յաղագս կնոջն վրկութեան ի Հոգւոյն սրբոյ։— Այլ արդ՝ ասեմք, եթէ ոք այլազգաբար խորհիցի ըստ Արտեմոնի և ըստ Յոբնաղի դրութեանն, և փոխեսցէ զսահմանս առաքելականս, և ոչ ընթերցի զաւետարանն ըստ Ղուկայ, եւ հովիւքն էին, ըստ կնոջն վրկութեան, և յետոյ ի Մատթէոսէ ըստ մարմնաւորութեան, և նախնիս ունել զԴաւիթ և զԱբրահամ, և եթէ այլազգ ինչ խորհիցի, և մատցածին բանիւք վտարանդի առնէ զմարդիկք, այնպիսին նզովեալ եղիցի յԱստուծոյ և ի սուրբ ժողովոյն, եթէ քահանայէ լուծցի, եթէ ժողովրդական որոշեսցի, և եթէ ոչ ընթերցցի զընթերցուածոցն գիրս, զոր եդեալ է առաջինն վասն ապաշխարութեան, և յետոյ զնայեայ մարգարէի ընթերցուածն, զոր համառօտ եդեալ է վասն անօրէնութեանն Տեառն, և յետ ամենեցուն ի Դանիէլէ, և զերգս երից մանկանցն, և զստանայ ի հուր, և որ այլազգ խորհիցին, այնպիսիք նզովեալ եղիցին յաստուծոյ և ի մէնջ և ի սուրբ ժողովոյն։

ե ամիդ Վասն ութօրեայ աւուրցն ընթերցուածոց և աւետարանացն, թէ պարտ է զամենայն աւուրս ընթեռնուլ ընթերցուած յառաքելական մատենից Պողոսի, և ոչ ընթեռնուլ մարգարէ. վասնզի ամենայն քարոզութիւն մարգարէից կատարեցաւ յերեկոյին հրագալուցի, և միաւորեցան հարսն և փեսայն յա-

ռագաստին. զի այսպէս կանոնեցին առաքեալք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և սուրբն Յակո-
բոս կարգեաց զընթերցուածսն, և յօրինեաց յերկ-
րորդումն աւուր ի մատրան սրբոյն Սանփաննոսի
ժողովելոյ և անդ կատարելով զօրէն կոծոյն, և ա-
պա ի Պօղոսի առաքելական մատենէն. և աւետա-
րան ի Յովհաննէ. և յերրորդում աւուր կիւրակէի
ժողովէին ի սուրբ մատրանն, որ է կաթուղիկէ և
բարձրագահ քան զամենայն եկեղեցիս. և ընթեռ-
նուլ ընթերցուած յառաքելական մատենէն, և ա-
ւետարան ի Մատթէոսէ, «իբրև նոքա գնացին» և
այսպէս զամենայն աւուրսն կատարել դրութեամբ
սրբոյն Յակոբայ ի փառս Աստուծոյ և մի հեռանել
դրութեանց Յորնադի և Արտեմոնի և նոցին խոր-
հողացն։ Ապա եթէ ոք գտցի օտար քարոզութեան
հաւանեալ և 'արարեալ, եթէ քահանայ է լուծցի, ե-
թէ ժողովրդական որոշեսցի, և եթէ եպիսկոպոս,
արտաքոյ աշխարհաց եղցէ՝ թագաւորական հրամա-
նաւ յաքսորս բնակեսցէ մինչև ցօր մահուան իւրոյ։

Դ ամհե Վասն օրինաւոր տօնի քառասներորդաց Տեա-
ռըն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր ի փետրուարի
ԺԴ, հրամայեցաւ կատարել ի փառս Աստուծոյ,
և մի տօնել ընդ հերձուածողս, որք դրութեամբ
Արտեմոնի մոլորեցան յուղիղ ճանապարհէն, և զգիրս
և զընթերցուածս փոխեցին. կամ եղև մեծ և աս-
տուածասէր ժողովոյս, զի ժողովեալ ամենայն հա-
ւատացելոց բերկրանօք սրտի և ցնծալից ուրախու-
թեամբ, հսկմամբ յերեկորեայ տօնեսցեն ի փառս
Աստուծոյ, յորում աւուր և հանդիպեսցի, հոգևորա-
կան օրհնութեամբ, ջահիւք բորբոքելովք, օրհնել
զայն՝ որ ըստ մարմնոյ մարդացաւ, և կրեաց զա-
մենայն կիրս մարդկային բնութեանս։ Մինչեւ յեր-
րորդ ժամն՞ եղիցին ի հսկման ամենայն զգուշու-
թեամբ, և յերրորդ ժամուն պատարագ մատչի ի
փրկութիւն ամենայն հաւատացելոց, որ զսրբու-
թեամբ վայելողսն աստուածատեսակս գործէ, յո-
րում աւուր՝ զգիշերն որպէս զտիւ լուսաւորէ՝ յայնմ
աւուր նկատել և ակնունել, և մի արհամարհանօք
և ծուլութեամբ։ Ապա թէ ի պահս սուրբ Զատկի
պատահեսցին, քառասներորդացն հանդիպիցի, յո-
րում աւուր հանդիպի, ի նմին աւուր տօնեսցի,
սաղմոսիւք և օրհնութեամբ, և երգօք հոգևորօք,
և մի փոխեսցեն զօրն՝ ծուլութեան պատճառաւ՝
արհամարհանօք, և պատարագ մատչիցի ի փառս

Աստուծոյ, և ի կատարումն խորհրդոյն. և ի փափուկ կերակուրս ամենևին մի՛ մերձենալ, մի՛ ի ձէթ, մի՛ ի գինի և մի՛ ի ձուկն, բայց միայն ի հաց և ի յաղ. և թէ ոք ըստ սովորական սրբոյ բաժակին, յայլ ինչ ագահիցի ի պատարագին, անընկալ լիցի տօնն, և պահքն անվաւեր եղիցի, ըստ մեծի հինգշաբաթի աւուրն պատարագին՝ եղիցի պատարագն, և կերակուրն, ապա եթէ յարձակման աւուր հանդիպիցի, գառնազէն խմբեսցին ամենայն հաւատացեալք ի Քրիստոս։

է ումհզ Բայց եթէ յուրբաթի և ի չորեքշաբաթի հանդիպի ըստ վերագոյն պատուիրանիդ՝ պահօք տօնեսցեն, և մի՛ լուծմամբ կերակրոց կամ ըմպելեաց։ Եւ եթէ ոք ի հաւատացելոց անցցէ ըստ կանոնեալ սահմանադրութիւնդ, անիծեալ լիցի, վասն զի այսպէս պատուիրեցաւ ընդ ամենայն աշխարհ ի սրբոց առաքելոցն, և աւանդեցաւ մեզ։ Եւ մեք այնմ հետեւեալ եմք. զոր նոքայն քարոզեցին և հաստատեցին. թէպէտև զատեալք և մեկնեալք։ Ի փշաքեր անապատ գնացին ոմանք, և եղեն լուցկիք հրոյն և կերակուրք որդանց, այլ մեզ քա՛ւ լիցի խոտորիլ ի քարոզութենէն սրբոց. ապա եթէ գտցի ոք զայս արարեալ, օտար եղիցի ի մէնջ և ի սրբոց օրհնութենէն հեռի։

Յովհ. Մանդ. ը ոյլդ Եւ որ ծնունդ առնեն յառաջ քան զյայտնութիւնն, չէ արժան, զի սուտ է. զի ծնունդն և յայտնութիւնն մի են, և յայտ յընթերցուածոցն է, որ ասէ, «Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս»։

Յովհ. Մանդ. բ ոյլզ Իսկ որ զուրբաթ՝ որպէս կիւրակէ պահեն և ի գործոց դադարեցուցանեն՝ մեղք են, և կոչեն զնա ծեր, ո՛յր է տեսեալ զնորա ծերութիւն, զի հինգ օրն աւագ են քան զնա, իսկ որք ի չորեքշաբաթի տօնս կատարեն ագիտաբար, մեղք են, զի հեթանոսական է և անհրաման։

Նիկ. Բ. կթ մլե Եթէ ոք ի կիւրակէի պահս պահէ, նզովեալ եղիցի։

ժող. Սայ Բ Բ Երկրորդ, տօնել զտօն աւետեաց ս. Աստուածածնի ի վեցն ապրել ամսոյ, յորում աւուր և հանդիպի, և զտօն փոխման նորին ի ԺԵ օգոստոսի, և յորում աւուր հանդիպի, և զտօն սրբոյ խաչին ի ԺԴ. սեպտեմբերի՝ յորում աւուր և հանդիպի, նոյնպէս և զայլ տօնս վկայից՝ յորում աւուր հանդիպի՝ ըստ իւրաքանչիւր յիշատակի։

Դ Դ Երբորդ տօնել զհրաշալոյց ծննդեան՝ սրբոյ յայտնութեանն, և զՁատկին, մինչև ցերեկոյն պահօք, և ոչ այլ իւիք լուծանել, բայց միայն թէ՝ ձըկամբ և ձիթով։

Զ.

ՑԱՂԱԳՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՐՈՑ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ։

Առաք. Թ Թ Կարգեցին առաքեալք և եդին հաստատութեամբ՝ թէ 'ի կատարումն ամենայն գրոց ընթերցցի աւետարան, իբրև զկնիք պատուական՝ ամենայն գրոց, և յորն կալով ամենայն ժողովուրդն լուիցէ նմա, զի աւետիք փրկութեան են ամենայն մարդկան՝ բանիւ կենարարին։

ԻԹ ԻԹ Կարգեցին առաքեալք և եդին հաստատութեամբ, թէ 'ի պաշտաման եկեղեցւոյ՝ ասացեն զսաղմոս և զօրհնութիւնս դաւթի պաշտել օր ըստ օրէ, յամենայն ժամ զմարգարէութիւնսն դաւթի ՃԾ. սաղմոս, որպէս և ասեն իսկ. Օրհնեցից զտէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա 'ի բերան իմ, և յօրէս տեառն խորհեցայ 'ի տուէ և 'ի գիշերի, սաղմոս ասացից և 'ի միտ առից, և լսելի արարից զձայն օրհնութեան նորա. և դարձեալ՝ սաղմոս ասացէք աստուծոյ մերում, և թագաւորին մերում՝ սաղմոս ասացէք։

Լ Լ Կարգեցին առաքեալք և եդին հաստատութեամբ, թէ յեկեղեցւոջ գիրք ընթերցցին՝ հին և նոր կտակարանք, որ լինիցին վասն կենարար չարչարանաց փրկչին մերոյ քրիստոսի, և գործք և խօսք աւետարանչացն քարոզութեան, վասն բանին մարդեղութեան, և վարդապետութեան աշակերտաց փրկչին, և այլ աւելի քան զայս՝ մի ընթերցցի 'ի բեմի։

Առաք. ԻՀ Եռն Կղէմ. ԾԵ ՁԹ Եթէ ոք ստութեամբ զվերոյգրեալսն ամբարըշտաց գիրս, իբրև զսուրբս եղիցի մուծեալ, առ 'ի վնաս ժողովրդոց, լուծցի։

Սրբոց Հաբշն Հեռա. ԻԷ ՃԿԶ Լուռ մտօք կալ ժողովրդականաց, և մի բազում լինել վարդապետք, գուցէ, որով չափով չափէ, չափեսցի նմա, կամ դատիւ դատեսցի, և խնամի աշխարհականն՝ այլ ոչ կարէ խնամել։—Եւ եղի-

ցի ձեզ ամենեցուն եկեղեցականացդ սուրբ գիրք՝ հին և նոր կտակարանաց՝ Մովսիսի, ծնունդքն, ելք, ղևտացիք, թիւք, երկրորդ օրէնք, Յեսու, դատաւորաց, Հռութ, թագաւորութիւնք չորք, մնացորդաց աւուրք, Եզրի Բ. բանք, Յովբ. սաղմոսացն ՃԾ, Սողոմոնի Գ. մարգարէք ԺԹ, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ, այլն, մակաբայեցիք, Սիրաք։ Եւ կալցիք առ 'ի խրատել զմանկունս ձեր։

Նիկ. Բ. Ոչ է պարտ 'ի ժողովսն զսաղմոսն 'ի միմեանս
զա մծը յարել, այլ ի միջին գրակարդացումն առնել։
ճա մկը Պարտ է և ի շաբաթի աւետարան կարդալ։
ճժդ մձ Ոչ է պարտ տգիտական կամ անկանոնական գիրս կարդալ, կամ սաղմոսել յեկեղեցւոջ, այլ զկանոնեալքն, զնոր և զհին կտակարանսն, ըստ որում և կանոնեալքն են։

Լաւոդ. Ոչ է մարթ աւելի զոմանս, արտաքս քան զկա-
ժե նդ նոնեալ սաղմոսողոգսն՝ ի բէմ հանել, և ի բեմի գրովք սաղմոս ասել յեկեղեցւոջ։
ժզ նե Զի աւետարան հանդերձ այլովք գրովք արժան է կարդալ ի շաբաթ օր։
ժէ նզ Զէ մարթ և պատշաճ, միահամուռ զմիմեանց զհետ ի ժողովուրդս սաղմոս միայն ասել, այլ զհետ միոյ սաղմոսի կատարումն առնել գրոց։

ծե նիդ Իբրև չէ մարթ յիմաստութենէ ուրուք եղեալ պաշտել յեկեղեցւոջ, բայց եթէ ի գրոց սրբոց իցէ, կամ կանոնեալք են յեկեղեցւոջ, թէ Սաղմոսք, թէ Օրհնութիւնք. այնպէս և գիրս ինչ չէ պարտ կարդալ յեկեղեցւոջ, բայց եթէ որ կանոնեալքն են, այս ինքն. զնոր օրէնս, և զհին կտակարանս, և զոր ինչ արժան է կարդալ, են այսոքիկ. զարարածս, զելս, զղևտացիս, զթիւս, զերկրորդ օրէնս, զՅեսու, զդատաւորսն, զՀռութ, զթագաւորութիւնս Դ, զմնացորդս Բ, զՆզր Բ, զսաղմոսն Դաւթի ՃԾ. զՍողոմոնի Գ, զԱռակս, զեկկլեսիաստէսն, զերգերգոցն, զՅոբ, զերկոտասան մարգարէսն, զՈվսէ, զԱմոս, զՄիքիա, զՅովէլ, զԱբդիու, զՅովնան, զՆաւում, զԱմբակում, զՍոփոնիա, զԱնգեա, զԶաքարիա, զՄաղաքիա, զԵսայի, զԵրեմիա, զԵզեկիէլ, զԴանիէլ, զՄակաբայեցիս։ Զնոր կտակարանաց՝ չորս աւետարանս, զՄատթէոս, զՄարկոս, զՂուկաս և զՅովհաննէս. գործք առաքելոց՝ կաթուղիկէք՝ թուղթք Է. Ա. Յակոբայ, Բ. Պետրոսի, Գ. Յովհաննու, Ա. Յուդայի, Պողոսի թուղթք, Ա, առ Հռովմայեցիս, Բ, առ Կո-

բընթացիս, Ա, առ Գաղատացիս, Ա. առ Եփեսացիս, Ա, առ Փիլիպեցիս, Ա, առ Կողոսացիս, Բ, առ Թեսաղոնիկեցիս, Ա, առ Եբրայեցիս, Բ, առ Տիմոթէոս Ա, առ Տիտոս, Ա, առ Փիլիմոն։ Այս սահմանք եդան, որ ի միասին ժողովեալք եպիսկոպոսք ՆԼԵ։

Եպեսի Բ. գ. ռ.ի Զկնի յարութեան՝ զերիս աւուրս ոչ ընթեռնուն կաթուղիկէք, վասն զի ի հայր, և յորդի, և ի սուրբ հոգին են կանոնք. և երկրորդ կանոնք, վասն զի յորդի է, որպէս ոչ թողաւ ոգի նրա ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն, և յոյս եղև ամենայն ծագաց երկրի։

Սահակայ մեծ. գ. ռ.ձ Եւ պաշտօն սաղմոսերգութեան անխափան լիցի ի տունջեան և ի գիշերի, ըստ օրինակի մայրաքաղաքաց, հօրն հովուապետի, զի ամենայն ումեք չէ օրէն և իշխանութիւն յապաղել զայն կարգ պաշտաման, կամ նորաձևութիւնս ինչ առնել, այլ միշտ ի նմին յարամնալ։

Յովհ. իմաստ. ժթ. ռ.մբ Արժան է յերեկորինս՝ և յառաւոտինս, զկնի ամենայն պաշտամանն նուագել զսուրբ աստուածն և ապա զհետ բերել յերեկորինսն զհանգստեան սաղմոս, և յառաւօտինս զարևագալին սաղմոս, իսկ յորժամ պատարագ մատչի ի սկզբան անդ պաշտաման յիշել զսուրբ աստուածն և զսոցուն խորհուրդ յառաջաբանի անդ հաւատեաւ յայտնեցաք։

ի. ռ.մգ Պարտ և արժան է զխաչեցարն երիցս անգամ զհետ բերել, ըստ երիցս անգամ կրկնելոյ սրբասացութեան, և մի՛ նուազեցուցանել, և նուազ գատանել ի շնորհաց խաչին Քրիստոսի։

իա. ռ.մդ Արժան է ի գիշերին՝ յորում ժողովին ի պաշտօն, նախ՝ զյառաջաբանիցն ասել զչորեսին սաղմոսն միաբանութեամբ ի թիւ՝ խոնարհ ձայնիւ, առաջին, զերրորդ սաղմոսն, երկրորդ՝ զութսունեւեթն. երրորդ՝ զհարիւրերկրորդն. չորրորդ՝ զՃԾ-երկրորդն, և նոցին զքարոզութիւն և զաղօթսն զհետ բերել, զոր ի նոյն խորհուրդ արարեալ է երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթուղիկոսի. քարոզութիւն Զարթուցեալքս, աղօթք՝ Զքէն զոհանամք. և զհանգիստ նորին՝ Նայեա տէր ողորմութեամբ։

իբ. ռ.մե Արժան է զառաւօտինսն՝ ամենեցուն՝ նմանսն միմեանց զնոյն և ըստ նմին կարգի կատարել. զի այսպէս վայելէ քրիստոսասիրացն, որ նմին լեզուոյ և ազգի են՝ միաբանութեամբ փառաւորել զաստուած.

և յօրինել զվարս ուղիղս, զի գրեալ է զսրբոց առաքելոցն, թէ էր նոցա սիրտ և անձն մի. և եթէ՝ էին ամենեքեան միաբան յաղօթս։ Արդ՝ զկնի հարցին և ողորմեային և տէրերկնիցին, և զփառք ի բարձունսն պաշտել. ապա ըստ իւրաքանչիւր աւուր զկցորդսն, զոր առեալ է սաղմոսացն, երկուշաբաթոյն, Լոյս տուր տէր աչաց իմոց. երեքշաբաթոյն Ի քէն է տէր աղբիւր կենաց. չորեքշաբթոյն՝ Ես ասացի տէր ողորմեա ինձ. հինգշաբաթոյն՝ Ես առքեզ տէր աղաղակեցի, ուրբաթոյն՝ Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. շաբաթոյն՝ Առաքեա տէր զլոյս քո։ Ապա զկնի քարոզութեան և աղօթիցն, զերեքսրբեանն երգել զփառաբանութիւն, հանդերձ սրբոյ աստուածածնին կցորդիւն։ Ապա զարեւագալին զսաղմոսն ասել, ըստ դասուց վերաձայնութեամբ։

Իդ ռմզ Նոյնպէս և զերեկոբինսն հանգոյն միմեանց ըստ այսմ կարգի. և այսու օրինակաւ կատարել, յառաջագոյն պաշտել զխոնարհեցո վերաձայնութեամբ ըստ դասուց, զոր երանելւոյն Ներսիսի Հայոց կաթուղիկոսի յաւելեալ է; որպէս թէ կամելով զսկիզբն ամենայն վերերգակ սաղմոսացն յաղօթելոյ առնել, զի և սաղմոսացս աղօթք Դաւթի են ըստ վերնագրոյն յայտարարութեան. զկնի նորա զայրեցո, մի ըստ միոջէ զերեսին սաղմոսն. զմիմեանց զհետ՝ ըստ դասուց վերաձայնութեան։ Իսկ զկնի մեսեդի և ուղիղ եղիցին ասելոյ, քարոզել և աղօթս մատուցանել, յետ այնորիկ զերեքսրբեանն նուագել նորին նմանութեամբ, և վախճան ամենայն պաշտամանն՝ ըզհանգստեանն սաղմոս ասել. ըստ դասուց վերաձայնութեամբ։

Իդ ռմէ Իսկ կիւրակէի աւուր առաւօտինքն այսգունի խորհրդով յօրինեալ բերէ զկարգն իւր։ Զկնի հարցինն՝ մեծացուսցէ ասել, վասն զի հարկաւորապէս պարտի այն՝ որ զյարութիւնն քրիստոսի ճառէ. ընդ նմին և զգերեզմանն յիշել և զսուրբ կոյսն, զի եթէ ոչ էր ծնեալ, ոչ էր հնար՝ և ոչ թաղել և եթէ ոչ էր թաղեալ, ապա և ոչ յառնել։ Արդ՝ գերեզմանն յընթեռնլոյն զաւետարանն յիշեալ լինի, իսկ զսուրբ կոյսն՝ ի մեծացուսցէն ասելոյն յիշեմք։ Զի որպէս ընկալան ի միմեանց զփրկչին յարութիւն ի գերեզմանէ, և գերեզմանն յարգանդէ, ըստ նմին և վկայք պարտին լինել միմեանց վասն յարուցելոյն, և այս է ճշմարիտ մարդեղութեան և մահուան քրիստոսի խոստովանութիւն. այլ սակայն ի ծննդենէն առ յարու-

թիւն զհետ եկեալ միաւորին, իսկ ի յարութենէն առ ծնունդն վերջադարձիլ անկարելի. զի չէ և գործեցելոցն ի քրիստոսէ պատմութիւն առնել անհնար է, և յաղագս այսորիկ՝ աւետիքն և ծնունդն, և մըկրտութիւն քրիստոսի ի միասին առեալ տօնախմբին, և սոքա ամենեքեան և որ այլ՚ն ևս իցեն տնօրինեալք ի քրիստոսէ՝ ի յարութեանն միաւորեալ բովանդակին, և այս յաղագս մեծացուցէ ասելոյն յառաւօտինան յաւուրն կիւրակէի։ Ցետ որոյ դարձեալ մինչև զաւետարանն ընթերցեալ. որպէս թէ տակաւին եւս ի թաղման վարկանելով զտէրն, արտաքուստ առ նա ի գերեզմանն աղաղակիցեմք ասելով, «Արի տէր օգնեա մեզ և փրկեա զմեզ, և թէ՝ Լո՛ւր աստուած աղօթից իմոց, ունկնդիր բանից բերանոյ իմոյ, և եթէ Թագաւորեսցէ տէր յաւիտեանն». իսկ յետ ընթեռնլոյ զաւետարանն՝ իբրու թէ զնոյն ինքն զյարուցեալն անդէն և անդ ընդ աւետարանական բանին ի դէմս մեր բերելով, հրամայեմք միմեանց, թէ «Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն, և օրհնեցէք զտէր»։ Վասն զի լուեալ աղօթից մերոց՝ յարեաւ և օգնեաց մեզ, փրկելով զմեզ ի մահուանէ, և թագաւորելով մշտնջենաւորաբար ամենայն տիեզերաց։ Բայց գիշեր՝ ոչ այնքան զժամանակն, որքան թէ զհրէական զանհաւատութիւնն անուանելով, որ զաղջամղջին խաւարի արդարեւ բերէ օրինակ, ըստ Եսայեայ պանծալի բանին, թէ ի գիշերաց կանխէ հոգի իմ առաւօտել առ քեզ աստուած, այսինքըն թէ՝ ի միջոյ ամբարշտաց համարձակիմ բարեպաշտել առ քեզ Աստուած։ — Արդ՝ զայսոսիկ այսպէս, և այս օրինակաւ յառաջ վարելով զկարգն, արժանէ զկնի փառք ի բարձանցն՝ զյարութեանն ասել, իսկ զսուրբ աստուածն հանդերձ սրբոյ Աստուածածնին կցորդիւն ի վերջն անցուցանել, որպէս և յայլ աւուրսն ըստ ասացելումն պատճառին։ Եւ զկնի ամենեցուն՝ զարևագալին նուագել սաղմոս, զոր եղիցի անուն տեառն, ասել սկսեալ են ի ժամանակացն Եզրի կաթուղիկոսի։

իե ումը Պարտ է ի գիշերապաշտաման զկանոնացն ըղհետ բերել, զչորս զայս քարոզութիւն։ Վասն ի վերուստ։ Վասն ի գիշերի։ Վասն ուղղելոյ։ Վասն գտանելոյ. զոր արարեալ է վասն նորին իսկ սըրբոյն Սահակայ հայոց կաթուղիկոսի, և ըստ իւրաքանչիւրոցն՝ զաղօթս զայսոսիկ հանգստիւք իւրեանց։ Տէր Աստուած մշտնջենաւոր. հանգիստ.

Շնորհատու բարեաց։ Ի գիշերի և ի տունջեան. հանգիստ. Հովիւ քաջ։ Անկեալեմք առաջի քո. հանգիստ. Քում ամենազօր։ Վերջինս՝ օրհնեալ ես տէր Աստուած մեր, որ և զմեզ, զմեղաւորս արժանի արարեր փառաւորել զքեզ, ընկալ բարերար և մարդասէր տէր՝ զամենեցուն մեր աղօթս, զխնդրուածս, զխոստովանութիւնս, և զգոհացողութիւնս, և շնորհեա ամենեցուն մեզ՝ զքո առատ ողորմութիւնդ և զգթութիւնդ, մի՛ թողուր տէր զծողովուրդս քո, և մի՛ մատներ խպառ վասն անուան քո։ Մի՛ ըստ մեղս մեր առներ մեզ, և մի՛ ըստ անօրէնութեան մերում հատուցաներ մեզ. այլ արա առ մեզ զողորմութիւն քո ի հազարս և ի բիւրս, զերծո՛ զմեզ յամենայն որոգայթից սատանայի, և փոխեա զմեզ յարքայութիւն միածնիդ քո տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Հանգիստ. Քեզ յանձն առնեմք զանձինս մեր՝ Աստուած ամենակալ հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի բարձունս բնակեալ ես, զխոնարհս տեսանես յերկինս և յերկրի. հայեա տէր յաղօթս մեր ե ի պաղատանս, մի՛ ցրեր զուխտըս քո, և մի՛ մերժեր զմեզ ի ժառանգութենէ քումմէ, այլ ըստ առատ քում բարերարութեանդ արժանաւորեա զծառայսս քո անճառելի լուսոյ՝ երկնից արքայութեանդ, Յիսուսիւ Քրիստոսիւ տէրամբ մերով, ընդ որում քեզ Հօր և սուրբ Հոգւոյդ՝ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Սիօնի հայոց կաթ. իդ. ամլթ Աղջիկ լօսեալ առն՝ թէ ապահար իցէ (տեւատես) մի՛ իշխեսցեն քահանայքն այնպիսոյն պսակ դնել, կամ զուգել ընդ առն յամուսնութիւն, մինչեւ սրբեսցի յապահարէն, և ապա ամուսնասցի։

Եւ եղիցի ձեզ ամենեցունց, եկեղեցականաց և աշխարհականաց պաշտելի սուրբ գիրք, հին և նոր կտակարանացն, Մովսէսի գիրք. Ծննդոց, Ելից, Ղեւտական, Թիւք, երկրորդ օրէնք, Յեսու Նաւեայ, դատաւորք, և Հռութայն. Թագաւորութեանց Դ, մնացորդաց գրոցն աւուրք Բ. Եզրի Բ. բանք. գիրք Յոբայ. Սաղմոսացն գիրք Ա. Սողոմոնի Գ. գիրք. ԺԲ. մարգարէքն, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ. և յարտաքուստ պատգամաւորեսցի առ ի ուսուցանել զձեր մանկունս՝ զուսումնաբազումս Սիրաքայ իմաստութիւն։

Բ. ժող. Անտ. Ամենայն գիրք աստուածաշունչք՝ են ի խրատ և ի վարդապետութիւն, բայց կանոնեալ և օրէնս-

թ ամծ ուսոյց գիրք, զոր պարտ է ընդունել՝ ցուցցուք։ Ծնունդ, ելք, ղեւտական, զթիւսն, զերկրորդ օրէնսն, զՑեսու Նաւեայ, զդատաւորսն, զՀռութ, զչորս թագաւորութիւնս. երկու մնացորդացն, Եզրաս, Դաւթի ՃԾ. սաղմոսն. Առակքն Սողոմոնի, Եկեղեսիաստեսն, զօրհնութիւն օրհնութեանց, զՑՁՐՕՐՆ, զերկոտասան մարգարէսն. Ովսէ, Ամովս, Միքիէ, Յովէլ, Աբդիու, Յովնան, Նաւում, Ամբակում, Սոփոնիա, Անգէաս, Զաքարիաս, Մաղաքիա, Եսայեայ, Երեմիաս, Եզեկիէլ, Դանիէլ, համանգամայն հնոց կտակարանաց տունք են ԲՃԻԹ։ Նոր կտակարանք. չորս աւետարանիչքն, Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս. Գործք առաքելոց, Կաթուղիկէից թուղթք Է. Ա. Յակոբայ. Բ. Պետրոսի, Գ. Յովհաննու, Ա. Յուդայի. Պողոսի թուղթք ԺԴ. առաջին առ Հռովմայեցիս, Բ. առ Կորնթացիս, Գ. առ Նոսին, Դ. առ Գաղատացիսն, Ե. առ Եփեսացիս, Զ. առ Փիլիպպեցիս, Է. առ Կողոսացիս, Ը. առ Թեսաղոնիկեցիս, Թ. առ Նոսին. Ժ. առ Եբրայեցիս. ԺԱ. առ Տիմոթէոս, ԺԲ. առ Նոյն. ԺԳ. առ Տիտոս, ԺԴ, առ Փիլիմոն։ Այս սահմանք եդան ի ժողովոյն Անտիոքայ, միանգամայն նորայ կտակարանաց, Ա. ՓՇՂ. Ա։ Եւ միահամուռ հին և նոր կտակարանաց, Թ. Ի. ՉԻ։

Է.

ՑԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՑ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Առաք. ժգ ժգ Կարգեցին առաքեալք և եդին հաստատուԹեամբ՝ եթէ խօսեցաւ Աստուած ընդ Աբրահամու, և ասէ՝ Թլպատեսցի մանուկ ձեր ութօրեայ, և այն եղիցի նշանակ ուխտին յաւիտենական՝ ընդ իս և ընդ ձեզ։ Լինէր նոյն ուխտ և ընդ Մովսիսի՝ հրաման առեալ յարարչէն, մշտկաւ զոսպային սրսկել ջուր զժողովրդեամբն, որ գուշակէր զմկրտութիւն հեթանոսաց։ Օրինակ էր Մովսէս և Ահարօն զհանդերձեալսն լինելոյ, փոփոխումն ստուերագրին, հրամայէր ջրով լուանալ յարտաքնում սրահին, ապա մերձենալ ի սրբութիւնն։ Օրինակէր զայս մկրտութիւն Յեսու Նաւէա անցանելով ընդ յորդանան, և ապա մտանել յերկիր պարգեւաց։—Օրինակէր զայս մկրտութիւն մեծն ի մարգարէս նա-

խանձաւորն Հեղիաս՝ անցանելով ընդ յորդանան՝ կենդանւոյն վերանայր յերկինս։ Բերէր և Եղիսէէ զսափորն ի գուշակումն մկրտութեան։—Մեծն ի ծնունդս կանանց կնքահայրն Յովհաննէս, որ արժանի եղեւ մկրտել զանարատ զտէր Յիսուս ի Յորդանան դետ, օրինակ լինէր նորոյ ուխտիս և մանկանց եկեղեցւոյ, և լուանալով զոտս մեր ի վերնատանն՝ ջրով մկրտութեան, զօրացոյց զմեզ և անմեղացոյց սրբութեամբ աւազանին՝ յօրինակ աշխարհի եթող. զի ի ձեռն քահանայութեան կարգի, մանուկ ութօրեայ մկրտեալ՝ եղիցի քրիստոսազգեստ, և վկայք որ ոչ ունին զմկրտութիւն ջրոյն՝ արեամբ իւրեանց փրկեսցին։

Առաք. ի ձեռն Կղէմ.

Եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաւագ, ըզթերահաւատից զմկրտութիւնն ընկալեալ կամ զպատարագ, լուծանել հրամայեմք. զի զինչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ, կամ զինչ մասն հաւատացելոց. ընդ հաւատին։

Ա ճժդ

Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց՝ ըստ Աստուծոյ բարբառոյն ոչ մկրտեսցէ, ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, այլ յերիս հայրս և յերիս Որդիս և յերիս Հոգիս, անկցի ի քահանայութենէն։

Ա՚ ճժե

Եպիսկոպոս կամ երէց, որ ոչ երիս մկրտութիւնս միոյ սրբութեան կատարեսցէ, այլ ի մի մկրտութիւն, որ ի մահն տեառն տուաւ, անկցի ի քահանայութենէն, քանզի ոչ ասաց մեզ տէր ի մահս իմ մկրտեցէք այլ գնացէք աշակերտեցէք զնոսա, և մկրտեցէք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Բայց որ մկրտելոցն է՝ ուսցի, եթէ Հայր ոչ խաչեցաւ, և ոչ ծնունդ կրեաց մարդոյ, և ոչ Հոգին սուրբ մարդ եղեւ և ոչ չարչարանս կրեաց, քանզի ոչ մարմնացաւ, բայց փրկեաց զաշխարհս ի վերահասեալ բարկութենէ՝ միածին որդին. վասն զի մարմնացաւ իւրով մարդասիրութեամբն՝ ի կուսէն մարմին ստեղծեալ. քանզի իմաստութիւն չինեաց իւր տուն՝ որպէս արարիչ, քանզի խաչի համբերեաց, և ապրեցոյց զաշխարհս յանակնկալ բարկութենէն։ —Արդ՝ մկրտիմք յանուն Հօր՝ ոչ որպէս մարդ եղելոյ, կամ չարչարելոյ։ Եւ յանուն Որդւոյ՝ որպէս կրեցելոյ զծնունդն, որպէս համբերելոյ խաչի, որպէս մեռելոյ և յարուցելոյ։ Եւ յանուն Հոգւոյն սրբոյ՝ համագոյական Հօր և Որդւոյ, իսկ որք ոչ յայս մկրտեն, որպէս ոչ գիտելով զխորհուրդ, բա-

բեալաշտութեան, անկցին ի քահանայութենէն։

Նիկ. ժդ ճկ — Վասն երեխային կամ եղեւ մեծ ամենայն ժողովոյն, զերիս ամս ուսցին զկարգ և զօրէնս, և մի եւս ամ ընդ ապաշխարողս՝ աղօթից զգուշասցին. մարդասիրութիւն ցուցցեն առ այնպիսիսն և խոնարհութիւն, զի զնմանութիւն բերելով օգուտ քեզ գործեսցես. և ապա լուասցի և վերստին ծնցի աւազանաւն, և հաւասարեսցի օրինացն. զի որ ապասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից։

Նիկ. Բ. ժդ ճձ — Պարտ է զհաւատացեալսն զերեամ մի ուսուցանել, և այսպէս աղօթակից լինել և մկրտել։

լէ մգ — Պարտ և արժան է զյղիսն մկրտել։

ծե միա — Ոչ է պարտ երդմնեցուցանել զերեխայսն, բայց միայն զկարգեալսն յեպիսկոպոսաց։

ճ մկզ — Ոչ է պարտ յետ երկուց շաբաթուց քառասնորդացն, ընդունել զոք ի մկրտութիւն։

ճա մկէ — Պարտ և արժան է որք մկրտին՝ զհաւատն ասել ի մեծի հինգշաբաթին։

ճգ մկթ — Պարտ է՝ որք ի հիւանդութեան մկրտեցան, զհաւատն ասել, յորժամ ողջասցին։

ճդ մհ — Պարտ է զկնի մկրտութեան օծանել զլուսաւորեալսն օծմամբ սրբով, անուանելով օծումն պարգևի Հոգւոյն սրբոյ։

ժթ մխդ — Պարտ է՝ որք ի հերձուածողացն դառնան, ապողինոսք, և պոնտացիք, մկրտել՝ թէպէտև եպիսկոպոսք իցեն։

Նիոյ Կեսաբ. զ յիզ — Վասն յղի կանանց զի արժան է մկրտել յորժամ եւ կամիցին, զի ոչինչ յայսպիսի իրս հաւասարեալ է ծնողն ընդ ծննդեանն. այլ արժան է ամենայն իրօք զյօժարութիւն ցուցանել, առ ի խոստովանութիւն ընդունելութեան մկրտութեան։

ժէ յլէ — Վասն որք ի նեղութիւն անկանիցին, կամ ի խիստ հիւանդութիւն, և կամ ըմբռնեսցին ի բռնաւորաց, և վասն նեղութեան մկրտեսցի, և կամ յառաջ էր քրիստոնեայ անուն, և գործքն վատթարք, և ապա վասն նեղութեան ի հաւատս կացցէ՝ զայնպիսին ընդունի եկեղեցի, այլ ոչ կատարելապէս. զի ակամայութեամբ են հաւատքն, զայնպիսոյն ասէ դիր, միթէ՞ հող խոստովան առնիցի առ քեզ։

Լուսդ. Զէ արժան յետ երկուց շաբաթուց աղուհացիցն՝
խբ նլա ի մկրտութիւն զոք ընդունել առանց ուսուցանելոյ։

խդ նլբ Արժան է ոչք մկրտին, նախ հաւատն ուսանիլ,
եւ յաւուրդ շաբաթու հինգշաբաթի օրն, համար տալ
եպիսկոպոսաց կամ երիցանց։

խդ նլդ Արժան է ոչք ի հիւանդութեան ընկալան զմկըր-
տութիւն, յորժամ յառնիցեն, ուսանիլ, զի գիտաս-
ցին՝ թէ որոյ շնորհաց և պատուոյ արժանի եղեն։

խե նլդ Արժան է՝ որք մկրտին, յետ մկրտութեանն օծա-
նիլ օծմամբ երկնաւորաւ, զի արժանաւորք լիցին
արքայութեանն։

ԱԹՀՆ. Հարց—Եթէ մանուկ երեխայ կատարեալ լիցի,
Ա. ՀԼԲ և դիպեսցի, յորժամ պատարագն մատուցանիցէ, եւ
անդիտանալով հաղորդեսցի, զինչ պարտ է առնել
վասն նորա։

Պատաս.—Մկրտել պարտ է՝ որպէս կոչեցեալ յԱստուծոյ։

Բ ՀԼԹ Հարց—Եթէ դիւահար ոք՝ երեխայ իցէ, և կա-
միցի նա՝ և կամ որք նորա իցեն զի առցէ նա զսուրբ
մկրտութիւն, պարտ է առնուլ թէ ոչ՝ այլ թէ մերձ
ի մահ իցէ դիւահարն։

Պատաս.—Եթէ ոչ սրբեսցի ի պիղծ այսոյն, ոչ
կարէ առնուլ զսուրբ մկրտութիւնն, բայց եթէ մերձ
ի մահ՝ մկրտեսցի։

Դ ՀԽԱ Հարց—Եթէ ոք երեխայ՝ հիւանդասցի և ի մտաց
թափեսցի, և ոչ կարէ զհաւատն խոստովանել, և ա-
ղաչեսցեն ընտանիք նորա, զի առցէ զսուրբ մկըր-
տութիւն, այլ զի աղաչանքն ևս երկար լինիցին՝
մինչև յաւուրս եօթն, արժան է առնուլ՝ թէ ոչ։

Պատաս.—Արժան է առնուլ, թէ ի պիղծ այսոյն
ոչ փորձեսցի։

Զ ՀԽԴ Հարց—Թէ կին երեխայ՝ ետ զանուն իւր լինել
երեխայ և յաւուր մկրտութեան եղև նմա լինել ըստ
սովորութեան կանանց. թէ պարտ է ի նմին աւուր
մկրտիլ՝ թէ ոչ։

Պատաս.—Ցապաղեցուցանել և արգելուլ պարտ
է՝ մինչեւ սրբեսցի։

ԺԹ ՀԾԶ Հարց—Թէ ուրուք ի հեթանոսութեան ժամա-
նակի՝ առեալ իցէ զկին եղբօր իւրոյ, և արդ՝ կա-
միցի լինել քրիստոնեայ, և ասէ տուք ինձ կնիք,

պարտ է առնուլ յանձն՝ թէ մեկնել ի կնոջէն և ապա կնքել։

Պատաս.—Չէ արժան մեկնել, զի ոչ էր ընդ օրինօք յորժամ զկինն արար։

իբ շծթ Հարց—Եթէ ուրուք յերեխայութեան կին արարեալ իցէ օրինօք, և որդիք լեալ իցեն յամուսնոյ իւրոյ, և թողու զայն որդւովքն, և այլ կին առնէ, և կնիք խնդրէ, զինչ արասցուք։

Պատաս —Ընդունիմք զնոսա, այլ նախ ապաշխարել։

լէ շհդ Հարց—Թէ երեխայ ոք յերեխայից՝ բաղմամեղ իցէ, և եդեալ ի մտի իւրում ի ժամանակս երիտասարդութեան իւրոյ՝ յանդգնութեամբ և ստահակութեամբ կեալ և յանկարծ անկցի յախտ մահու, և ի ժամ մահուն՝ ի հարկէ յանձն առնու զմկրտութիւն, տամք համարձակ, եթէ խղճիմք, վասն առաջին արհամարհութեանցն և հանապազ արհամարհելոյ զբան պատուիրանին։

Պատաս.—Պարտ է տալ։

լը շհդ Հարց—Իսկ եթէ ի ժամ մահուան կասկեսցի բերան երեխային, և ոչ կարասցէ զմեղս իւր խոստովանել, և ոչ զհաւատն դաւանել ի սուրբ երրորդութիւնն, այլ միայն ակնարկէ, թէ տուր ինձ կնիք, պարտ է տալ՝ թէ ոչ։

Պատաս.—Պարտ է տալ։

լթ շհե Հարց—Եթէ ընդ ծնանիլ կնոջ՝ և մանուկն իսկ ի նմին աւուր դժուարածին լինիցի, պարտ է տալ նմին կնիք թէ ոչ, և կամ եթէ առողջ է՝ յետ քանի աւուր պարտ է տալ զկնիքն։

Պատաս. —Յորժամ կամի, մանաւանդ փութալ պարտ է։

խթ շձե Հարց.—Թէ ոք յանդուգն ի մարդկանէ, երթեալ քահանայ անուանէ զինքն յօտար երկրի, և զրաղումս մկրտէ վասն շահի օգտութեան, և կարասի ստանալոյ, և յետոյ ի վերայ հասանեն, թէ չէր քահանայ յորմէ մկրտեցանն, զինչ պարտ է առնել զմկրտեալսն ի սուտ քահանայէ։

Պատաս.—Վերստին մկրտել արժան է։

ձբ ոժը Հարց.—Թէ մոգի ուրուք կին կամի քրիստոնեայ լինել, եւ այրն չարգելու, բայց ի կենդանութեան իւրում չարձակէ ի բաց, պարտ է նմա կնիք

տալ թէ ոչ։ Նոյնպէս և այր՝ եթէ կամի քրիստոնեայ լինել, և կինն ի նմին մոգութեան կայ հաստատուն. պարտ է տալ կնիք ի նմին ամուսնութեան՝ թէ ոչ։

Պատաս.—Պարտ է տալ կարի քաջ։

Ճե ոխա Հարց.—Թէ ոք յերեխայից դիպի ի բանակի ի պատերազմունս, եւ ասէ ցերեցն, թէ տուր ինձ կնիք, եւ երեցն կազմած ինչ կնքոյ ընդ ինքեան ոչ ունիցի, եւ երեխայն ստիպէ, թէ պատերազմ առաջի կայ և մահ, և զերկուս և զերիս աւուրս գայ աղաղակէ, և վկայութիւն դնէ առաջի Աստուծոյ, թէ մի տայք ինձ երեխայ մեռանիլ, թէ ոչ՝ դուք էք պարտական հոգւոյն իմոյ, և երեցն զկազմածէ ուրեք երթալ չիցէ ձեռնհաս վասն պատերազմողաց՝ որ շուրջ զնոքօք են, զի՞նչ պարտ է առնել։

Պատաս.—Մկրտել արժան է ի ջուր և ի Հոգին սուրբ, թէպէտ ոչ ունի զիւղն օծութեան, որպէս կենարարն մեր Քրիստոս ասաց ցաշակերտսն, թէ՝ Յովհաննէս մկրտեաց ի ջուր, բայց դուք մըկրտիցէք ի Հոգին սուրբ. և որպէս ուսաք ի սուրբ գրոց, թէ որպէս ի սուրբ պատարագն ի վերայ սուրբ սեղանոյն՝ Հոգին սուրբ իջանէ, նոյնպէս և ի սուրբ աւազանն մկրտութեան Հոգին սուրբ իջանէ։

Բարս. Բ. Այր կամ կին յանհաւատից թէ գան ի մըկր-
ճլը պժդ տութիւն, արժան է ընդունել քահանային, բայց փորձել և քննել պարտ է թէ ունին ամուսին՝ ոչ է արժան քակել, այլ սրբութեամբ տանել յաւազանն՝ և զկարգն կատարել, և ապա օրհնել զջուրն և ինքեանց լուանալ տալ, և զինչս ծախել, և օր ըստ օրէ յորդորել ի հաւատս։

միը ջդ Երեխայ՝ որ ի մօրէ մեռեալ հանդիպի, անպարտ են ընտանիք նորա, վկայութեամբ երկուց կամ երից։

միթ ջե Երեխայ՝ եթէ յարգանդէ մօր իւրոյ կենդանի գայ, և հոգաբարձուքն անփոյթ առնեն, և ոչ զգուշացուցանեն քահանային, և երեխայն մեռանի, արիւն նորա ի վերայ ամենեցուն, որ ի տեսին հանդիպին, մանաւանդ ի վերայ հոգաբարձին և ծնողացն, Է. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Գ. ամ ընդ ձեռամբ հաղորդեսցի օրինաց։ Բայց վարդապետն հայելով ի վերայ իշխան է կարճել զկարգն։

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ